



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ թիվ 35

06 ապրիլի 2012 թվական

ՌԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ՝ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՆՐԱՀԱՎԱՔԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ
ԻՐԱԶԵԿՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով ՌԲարգավաճ Հայաստան՝ կուսակցության լիազոր ներկայացուցիչ Ռ. Մանուկյանի պաշտոնական գրությունը 2012 թվականի ապրիլի 18-ին, ժամը 12-ից 16-ը Մարալիկ համայնքի կենտրոնական հրապարակում Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզչության շրջանակներում .ՌԲարգավաճ Հայաստան՝ կուսակցության կողմից հանրահավաք կազմակերպելու ցանկությունը, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 29-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության ՌՇնտրական օրենսգրքի՝ 18-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության ՌՀավաքների ազատության մասին՝ օրենքի 6, 7, 11, 21-րդ հոդվածների

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. ՌԲարգավաճ Հայաստան՝ կուսակցության լիազոր ներկայացուցիչ Ռ. Մանուկյանի իրազեկումն ընդունելի գիտություն ՌԲարգավաճ Հայաստան՝ կուսակցության կողմից 2012թվականի մայիսի 6-ին կայանալիք Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզչության շրջանակներում, 2012 թվականի ապրիլի 18-ին ժամը 12-ից 16-ը Մարալիկի կենտրոնական հրապարակում հանրահավաք անցկացնելու մասին:
2. Իրազեկումն ի գիտություն ընդունելու մասին որոշումն անհապաղ տեղեկացնել կազմակերպիչներին և ոստիկանությանը, ինչպես նաև այդ որոշումը փակցնել քաղաքապետարանի վարչական շենքում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում:
3. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքապետարանի վարչական շենքում այն փակցնելու պահից:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ